



ՏՆՕՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 33

ՀԱՐԱՐ

12 ԱՊՐԻԼ 1908

ԱՊՂՑՅՍՏՈՒՄ ԵՄԻՈՂՇՈՒՄ

ԶԵՆԻԹ

ԱՊՂՑՅՍՏՈՒՄ ԵՄԻՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.


Պալատ-Գարու, Օռդու-Պաք հաստատութեան դէմ, թիւ 16

Հատոր 40 փարս

(آ. آسادوریان) شرکت مطبعه سی باب عالی جاده سنده نوسو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառսկսի թիւ 52



Ձեռնի, ոտի ու ոտի եւ ձեռնի
փանգամայն մեկնաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մեայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅՐԱՅՈՒՆ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՆԱԽԱԳԻՏԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------|---|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազլիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՐՏԱՐ | Զարը Պոյու, թիւ 120 . |

Կատարեալ երախաւորութիւն

Մասնահիղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօլլուի տունը:



ՔԵՒԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլ-
սոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. գա-
ւառներու համար տարեկան 108 դր. վեց-
ամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ
վաճառում՝ քաւ փառա: ԱՐԵՒԵԼՔ
հրա յարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խը-
նաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմ-
բագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿՆՐԱԶԱՐԴ ԸՄԿԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Մանօթ Դէմքեր և շէրքեմն ալ տեսա-
րաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մա-
նագիրական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, անտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւայլն,
բացի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագին շաբաթ է ուղղել Տէր և
Տնօրէն Գարեգին Էֆ. Պոյաճեանի հասցէին,
Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հա-
տատուած են թերթին տպարանն ու խմ-
բագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 33

ՇԱՐԱԹ

12 ԱՊՐԷԼ 1908

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

Իսէալ կեսուր մը ըլլալ ուզող
կիներուն ուղղուած:

1. Մէկ տուն բընակիլ չըլլար. — հարկ է որ
դուն քեզի համար զաւ յարկ մը վարձես :
2. Կիրակիէն զաւ ո՛ր եւ իցէ որ
ճաշի հրաւէր պէտք է միշտ մերժես :
3. Մինչեւ որ խընդրանք չըլլայ մասնաւոր ,
ո՛ր եւ է խրաւս բնաւ չի պիտի ուղղես :
4. Դըրացիներու կամ ասոր անոր
քով՝ դիտողութիւն չի պիտի ընես :
5. Ծագած խնդիրներ , վէճերը բոլոր
առանց շնչելու պիտի կարգադրես :
6. Ամէն անգամ որ ծնունդ պատահի նոր ,
անծնըւէր՝ պիտի յոգնիս ու հսկես :
7. Թողներդ , սիրուելու փափաքով մոլոր ,
պիտի չափազանց չի շրփացունես :
8. Կաղանդին , ինչպէս ասէն տօնի որ ,
ընծայ ու նըւէր շա՛ս պիտի բաշխես :
9. Պաղ կատակներու , խօսքերու ալ չոր ,
առանց բարկութեան պիտի հանդուրժես :
10. Ա՛յս կերպով միայն կրնաս դուն՝ անդորր
իսէալ կեսուրն ըլլալ ի՛սկապէս :

(Այգեկութ)

Ա.Լ.ՓԱՍԼԱՆ

“ԱՅԳԵԿՈՒԹՔ,,ԻՆ ԱՌԹԻԻ

Ազնիւ Աշխատան ,
 Ըսած էիր ինձ or մը par hasard
 Թէ անձիս սաղեւ համար ու հազար
 Պատաստ ունէիր , or մ'ալ ըսիր քե
 Ֆերիս էձեռնին բաղձայ ի ւրե
 Ամփոփել զանոնք , ձուլել մի հասոր .
 Եւ անմիջապէս « լաւ » ըսիր ասոր :
 Շատ չ'անցաւ կարծեմ , մէկ երկու ամիս ,
 — Եւ կամ քե երեք ... երեք կը կամիս —
 Ահա լոյս տեսաւ հասորդ անգին ,
 Զոր բերիր յանձնել բաղդի հոսանքին :
 Առաջին փորձդ եր , անդամիկ երկրդ ,
 Ուր խտացուցիր , արցունքդ , երգըդ
 Ժպիտ ու յորդոր , առակ , երգիծանք ,
 Ամբողջութիւն մ'որ եղբ բերե պարծանք :
 Անունն «Այգեկութք» , անուն մ'original ,
 Որ երբեք չիյնար միտն ուրիշի մ'ալ ,
 Տիպար այգիիդ բարձր ու անհառ ,
 Թուփերուն ներքեւ սնած անպատեհ ,
 Ծեր , կին ու տղայ , մանուկ պատանի ,
 Որք ծծած էին քո հիւսկն պիտանի ,
 Ահա դու անոնց առջեւ կը բանաս
 Մուսաներու վայրն՝ չեմաղն Պառնաս
 Որուն կողերուն վրայ ցան ու ցիր
 Յագեցան գրովդ զոր դու ծանուցիր :
 Մէն մի բուփին տակ , պահուած մի ողկոյց ,
 Ժպտող մանուկ մ'է՝ կամ լացող մի կոյս
 Զուարթ causerie մը , սիրուն մի երթուած ,
 Բոլորն ան վարպէտ գրչի լոկ կերուած :
 «Այգեկութք» ըսիր , ի՞նչ աղուճճ անուն
 Բանաստեղծական իմաստն ալ անհուն ,
 Որով ուզեցիր դաս մը տալ ուժգին
 Անոնց որք կ'երգեն երկինք , սեր ու կին ,
 Թէ երբեք ինքնին չէ քերքեւ կատակ
 Եւ կամ զբօսանք , փուն աննպատակ ,
 Բանաստեղծ մը նոր ու դեռաբողբոջ ,
 Պէտք է որ մաշե երկար կեանք մ'ամբողջ
 Որպէս զի or մը հասնի փափախին ,
 Յագուրդ տայ կոյմանն ւրտի պատպախին :
 Ահա դու անոնց գրովդ կուտաս ,
 Բարձր ու վսեմ մի գեղեցիկ դաս :

Միակդ էիր արդէն , ու պիտի մնաս ,
 Peut-être aux novices serait une menace
 Զի փառքիդ դափնին նակասիդ պսակ
 Զ'ունի ելեւեջ ոչ ալ գին ու սակ :
 Շաբթի մը ի վեր ձեռնն ամենուն
 «Այգեկութք»դ կայ , Ալփասլան անուն ,
 Սալօններու մէջ , *պարտ* , գրասուն
 Զեք կը պատեն , զիրիդ ալ՝ կուտուն :
 Կը յիշե՞ս or մը գրած ես զուարթ
 Տողեր բանկազին զոր մէջ բերեմ արդ ,
 Մեր Մանգուլեկին որ սիրտ յուզում է
 Եւրոպայի ալ չէ չափուշ իւզիւմ է ,
 Գիտար Ալփասլան քե Մանգուլեկն է
 Սիրոյած բռնուած աշխարհ ամեն
 Թէ ան պիտի՝ կրնար ի գլուխ հանել
 Գործն զոր ուրիշներ զսնէին անել :
 Գիտե՞ս որ անի ծախուի հինգ հազար ,
 — Ըսի զղջացի , չեղան տան *նազար* , —
 Մէն մի ընթերցող պիտի՝ ուղե գնել
 Պարզ կոշկակարէն մինչ Գեր . Տէր Գնել ,
 Թէ վաճառական , քե սեղանաւոր
 Պիտի՝ գնեն կարդան յանգեղդ բիրաւոր :
 Եւ քե Ս. Զատիկն ինչպէս սովոր են
 Թողուլ ժամ ու Գիրք օրհնենք ու Որէն
 Խոթեն թապախ , գլխարկ ու հագուստ ,
 Զագիր բամբասանք , լծանք արտաւուս ,
 «Այգեկութք»դ ահա կուգայ հիմնովին ,
 Փոխել զայս բոլոր , հինն տալ հովին :
 Ամեն ոք զեք պիտի՝ խօսի յաւե
 Զեք ու երկդ նոյս բուրումնաւե :
 Յովհաննէս էձեռնին , Մանգուլեկի տէր
 Որ քու արժանիքդ տաւ մօտէն գիտէր՝
 Իր իսկ հանութիւնն տուաւ այս առթիւ
 Որ Ալփասլանի համակիրք անթիւ
 Բանաստեղծական հասար մը կարդան
 Իբրեւ Զատիկի մի սիրուն *pas de temps* :
 Որչա՞փ ալ ածան ... քառորդ մենիսի
 Ալ հաս մը գնելն մե՞ծ պարտ մ'է նիսի :

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՔՐՈՆԻԿԻԿ

ԳԱՐՈՒՆԸ. — ՁԱՏԿԻ ՇԱՐԱԹՐ.

Դասականին սիրահար, շատաբանութենէ ախորժող, ջորիներու պէս յամառ, կամակոր գրագէտներու idemiste դասակարգին չի պատկանելու համար է թերեւս որ, առանց երկինքին երեսը նայելու, առանց լսելու սոխակին ձայնը և առանց նշմարած ըլլալու նոյն խակ նշեններու ծիւ տուած առաջին ճերմակ ծաղիկները, կ'զգամ թէ մտած ենք տարւոյն այն եղանակին մէջ զոր օրացոյցները գարուն կը կոչեն:

Անյիշատակ ժամանակներէ ի վեր, Քրիստոսէ հինգ դար առաջ, դեռ երէկ և գուցէ վաղը ինչպէս նաեւ ասկէ երկու հազար տարի ետքն ալ, պիտի գտնուին, ինչպէս գրտնուած են գրագէտներ որ ուխտ ըրած են կարծես, գարնան գալը ուրիշ բանէ չի կըռահել բայց եթէ դաշտերու կանաչութենէն, երկնքի պայծառութենէն, օդին գաղջութենէն և ծանրաշափին ելեւէջէն:

Բնութիւնը՝ այդ պինդ գլուխ բանը որ ծնած օրէն սաչափ մը յառաջդիմութիւն չէ ըրած, որ չէ կրցած իր սովորութիւններուն մէջ իօդափ չափ բան մը փոխել, որ միօրինակութենէ չի ձանձրանար և այնքան քիչ հետամուտ է նորաձեւութեանց: Բնութիւնը՝ այդ տափակ բանը որմէ բանաստեղծները միայն կօգտուին ապուշ անհամ ոտանաւորներ գրելու համար. բնութիւնը՝ այդ հինցած, մաշած, dèmodé տարրը միակ առաջնորդն է այն տեսակ մտածողներուն և գրողներուն որ գարնանային յօդուած մը գրելու համար պուրակի մէջ կապաստանին և կամ կոնակնին կուտան նորաբողբոջ վարդի թուփի մը խնդրելով սոխակէն որ կտոր մը երգէ իրենց համար և հրամայելով առուակին որ իր մըրմունջը չի դադրեցնէ:

Կզգամ թէ մտածելու այս եղանակս խիստ տարօրինակ պիտի թուի շատերուն և եթէ ոչ երեսիս բայց գոնէ ետեւէս պիտի ըսեն անպատճառ թէ խելքիս եկած է և կը զառանցեմ:

— Բնութիւնը չի հաւնիլ, պաշտամունք

մը չունենալ անոր համար, անկէ չի ներշնչուիլ, ընդհակառակը բանի տեղ չի դնել զայն և քիչ շատ վրան խնդալ, օ՛հ, խելագարի գործ է, յիմարի:

Ձեր առարկութիւնը այս չէ:

Բնութիւնը ... շատ աղէկ, ասոր վրայ խօսինք քիչ մը եթէ լաւագոյն բան մը չունիք ընելիք այս պահուս: Իրա՛ւ, աղւոր, գեղեցիկ, հիանալի բաներ են արեւը ու լուսինը: Զմայլելի են բոյսերը, դաշտերը, լեռները և տարածութիւնները ծովերուն: Լճակ մը որ կը քնանայ, արշալոյս մը որ կը դարձնու, իրիկնամուտը որ կը մարի, ո՛հ, չի հաւնուելիք բաներ չեն ասոնք, կը խոստովանիմ:

Ըսելիք չիկայ, հրաշալի են հորիզոնները, կամարը երկնից և այն ամեն լոյսերը որ անոր վրայ կը պսպղան: Կենդանական աշխարհին մէջ ռնգեղջիւրէն սկսեալ մինչեւ լուն, և բուսականին մէջ կաղնիէն սկսեալ մինչեւ մանուշակը և մարդկայինին մէջ Հոմերոսէն սկսեալ մինչեւ ... Վահրամ Թաթուլ ամեն բան և ամեն ինչ բնութեան մէջ մէկ հրաշալիքներ են, տարակոյս չկայ:

Սքանչելի են առաւօտեան ցօղը, վերջալոյսին մարմրուն երանգները և պարզապէս վեհաշուք բաներ են յատակը ծովուն, գագաթը Հիմալայային և մէջտեղուանքը ... անտառներուն: Սոխակը որ կը դալլալէ, ալիքները որ կը գոռան և կիններ որ կերպեն, մէյմէկ յայտարար նշաններն են բնութեան անմրցելի աղւորութեանը:

Անդին զարմանազան երեւոյթները ձեր սիրած բնութեան, ինչպէս հովը, անձրեւը, փոթորիկը, երկրաշարժը, ձիւնը, կարկուտը, ողորումները և ... tout le bataclan:

Առտուն օդը աղւոր է, կէսօրէ վերջը կանձրեւէ, երէկ տաք էր, վաղը ձիւն պիտի գայ, նստած տեղդ յանկարծ երկրաշարժ, կը ճամբորդես, ծով մը՝ միապաղաղ է mer émail-lée եղած կնկան մը այտերուն պէս և ճամբան փոթորիկ մը, փոթորիկ մը որ ...: Վերջապէս ասանկ խենդ բաներ շատ կան բնութեան մէջ որ իր ամբողջ վեհութիւնը, մեծութիւնը և հրապոյրը կը կազմեն:

Այս ամեն երեւոյթները, անսկիւկալները, փոփոխութիւնները, կը հասկնամ թէ իրենց մասնաւոր հմայքը ունենան տարի մը, եր-

կու, տասը: Բայց կը մտածեմ թէ երբ հարիւր յիսուն հազար տարիներէ ի վեր մի եւ նոյն հովերն են, մի եւ նոյն փոթորիկները, մի եւ նոյն արշալոյսները և մի եւ նոյն անձրեւները որ իրարու կը յաջորդեն անխափան, օհ, կը յոգնիս, կը ձանձրանաս և կը մեռնիս մի եւ նոյն բաները այդքան անգամ տեսած ըլլալուդ: Ուստի շատ մի մեղադրէք զիս եթէ պէտք եղած կերպով չեմ հասկնար ձեր բնութիւնը և պայմանադրական սքանչացումը չունիմ իրեն հանդէպ:

Բնութիւնը կը թողում բանաստեղծներուն և կանցնիմ... Սկիւտար: Հոն է որ աչքովդ կը տեսնես գարնան գալը: Փոխանակ մինչեւ հէօզթէփէ երթալու, Պաղլաբ-պայի կէս ժամ սլքտայ և գարունը առջեւէդ կանցնի իր նոր, թարմ և անօտ արդուլարդով: Ծաղիկները կողովներու մէջ գետեղուած, իրենց բոլորովը կողովներ երկայնութիւնը մայթերուն, յարդէ գլխարկներ — գարնան այդ մունետիկները — բոլոր գլխարկավաճառներու ցուցափեղկերը կը լեցնեն, նուրբ ամառնային կերպաններ զոներու վրայ կը կախուին, աղջիկներ մի նակնին դուրս ելած են, վարդեր բուսած են անոնց այտերուն վրայ, կեանք կայ աչքերնուն մէջ և կայտառութիւն մը՝ շարժուածքներուն: Գարուն է ահա:

Եւ յետոյ ինչ պէտք երկնքին, ծովուն և դաշտերուն խորհուրդ հարցնել գիտնալու համար թէ գարունը եկած է թէ ոչ, սիրտդ քեզի կըսէ արդէն: Մարտի կէսէն մինչեւ Ապրիլի կէսը երբ ամեն բան հոգի կառնէ, կը զարթնու և բողբոջիլ կսկսի, սիրտն ալ, որ քիչիկ մը ընդարմացած էր վերջին ցուրտերուն տակ, յանկարծ կը սթափի, չարժիլ կուզէ և ձայն կուտայ: Սիրելու անզսպելի մարմաջը բարախել կուտայ զայն և կը փռնուռես սիրած էակդ, մայրը կորսնցուցած գառնուկին պէս Գարնան գալը սրտիդ հարցուր:

* * *

Գարունը մեզ բերող սա Մարտ ամիսը, որուն յաջորդեց Ապրիլը և Զատիկը, որոնց վրայ չես կրնար չի խօսիլ երբ քրոնիկ մը գըրելու դատապարտուած ես: Մարտ ամիսը որ կին արարածին շատ կը նմանի որովհետեւ անոր պէս փոփոխական է, անոր պէս խաբե-

բայ և անոր պէս նենգութիւններով լեցուն, այս տարի անգամ մը եւս հաստատեց թէ խենդ ամականը պարապ տեղը տրուած չէր իրեն ինչպէս իմասունը՝ Սողոմոնին:

Ինչ տարօրինակ օդեր, Աստուած իմ, այդ երեսուն և մէկ օրերուն մէջ: Ամեն գոյնէն կար. ամառնային օրեր, պայծառ օդ, երկու օրէն հով, անձրեւ, ցուրտ և մրրիկ, բոլոր աստիճանները ծանրաչափին:

Ասիկայ պատճառ մը չեղաւ սակայն որ եկեղեցւոյ արարողութիւնները չի կատարուին, քապախները չի օրհապայեցուցուին: Ամէն բան իր տեղն էր, կարմիր հաւկիթները, գառնուկները, չեօրեփները, այցելութիւնները, տուն օրհնենքները, ժամկոյը, քահանան, տիրացուները, ջրհանկիրները և բոլոր այն գլխուցառութիւնները որ տօնական այդ հանգստի օրերուդ մէջ անհանգիստ կընենք:

Այցելութիւնները մանաւանդ, որ պարզապէս օրհնէ մըն են մարդուն գլխուն, կարելի չէր արդեօք մէջտեղէն վերցնել զոնէ տաղտուկ չի պատճառելու համար տանտիրուհիներուն, որոնք զատապարտուած են՝ խեղճերը՝ մէկ օրուան մէջ հարիւր յիսուն անգամ մի եւ նոյն բառը կրկնելու:

— Բրիստոս յարեաւ.

— Շատ աղէկ շնորհակալ եմ:

— Աս ինչ օդեր են.

— Կարծես Ծնունդը կընենք կոր.

— Երէկ ինչ աղւոր էր, այսօր նորէն աւրուեցաւ.

— Նշանտուքին պէս, իմացա՞ք:

— Այս որքան թապախ կը պառտցնեն կոր.

— Քարոզը քիչ մը երկար չէր.

— Նոր շուրջառը տեսա՞ք.

— Ինչո՞ւ համար թապախին ստակ ձգած ատենդ merci կըսեն կոր, փոխանակ շնորհակալ եմ ըսելու.

— Ժամը շատ բազմութիւն՝ կար.

— Մոմէկները լեռը թող ելլան.

— Տիկինին բարեւներս.

— Երթաք բարով:

Ասիկայ համ ունի:

Ե. ԱԼՓԻԱՐ



ՕՐՈՒԱՆ ԴԷՊՊԵՐ

ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ՀՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

— ՎԵՐՋԻՆ ՎԱՅՐԿԵԱՆ —

ԿԱՎՌՕՇ ՍԻՐԱՀԱՐՈՒԱԾ... ?

Ձեռ գիտեր, օրիորդ, Հանրագիտակի ընթերցող էք և պիտի կրնա՞ք կարդալ իմ սոյն տողերը, թէ յաւիտենապէս անծանօթ պիտի մնան ասոնք ձեզի, նման իմ սիրոյս :

Ամէն պարագայի մէջ, կարդաք կամ ոչ, տանիքներու վերեւէն պիտի պօռամ ցաւս և եթէ պատահամք ձեր ականջին հասնելու ըլլան ցաւազին ճիչերս, թերեւս վրաս պիտի կարեկցիք, եթէ ... չխնդաք անգթօրէն :

Երկար ատեն ուրիշներու վրայ խնդացի ես ալ, և պիտի խնդամ :

Ու հիմա ես անձամբ ինկայ այն ծիծաղելի դերքին մէջ, որպէս զի ուրիշները վերաս ծիծաղին :

Սիրահարուեցայ, սիրելի՛ ընթերցողներ, աւա՛ղ, սիրահարուեցայ, ճի՛շդ ինչպէս պիտի ընէին Միւր. Պարսամեան կամ Հրանտ Նազարեան :

Ես որ անոնց վրայ կը խնդայի ... :

Կը տեսնէ՞ք ճակատագիրին ապուշ կատակը :

«Մի՛ ընէր ուրիշին՝ ինչ որ չեա ուզեր որ ուրիշները քեզի ընեն» :

Ես ուրիշները քաշքշեցի, հիմակ ալ անոնք զիս պիտի քաշկուտեն :

Մարդիկ երբ սիրահարուին, ցաւերնին միմիայն ինքզինքնուն կը յայտնեն, բայց ես որ կը փափաքիմ միշտ մարդոցմէ տարբեր բան մը ընել, կը հրապարակեմ սէրս և ընթերցողներուս կը փութամ պատմել թէ ի՛նչպէս օձիքս տուի :

Հանրային մարդոց կեանքը հանրութեան կը պատկանի՛. — հանրութիւնը պէտք է իմանայ թէ այնինչ հանրային մարդը ե՞րբ ապտակ մը կերաւ, ե՞րբ կարգուեցաւ, ե՞րբ զաւակ չինեց, քանի՞ գաւաթ Եանօս կրնայ ազդել իրեն ... եւայլն :

Արդ, իբր հրապարակային մարդ, ճիտիս պարտքն է զոր կը կատարեմ :

×

Կիրակի օր մըն էր :

Իթիփիոս մարդիկ պտոյտի կ'երթային՝ հանդերձ ընտանեօք :

Ձանձրոյթէ վարակուած՝ Բանկալթիի մայթէն վար կ'իջնէի Մանգուժի շաքածական քրոնիկիս համար նիւթ փնտռելով անցորդներու երեսէն, երբ ...

Ո՛հ հանդիսաւոր վայրկեան, որ կեանքս տակնուվրայ պիտի ընէր :

Դէմս ելաւ օրիորդ մը՝ իր սպասուհիին ընկերացած, որ դէպի վեր կ'ելէր :

Սեփսեւ մազեր առատ, սեփսեւ յոնքեր՝ գծազրուած կարծես, սեփսեւ խոշոր աչքերը, սեփսեւ բիւրեւ և ճեփճերմակ մորթի գոյն մը, սեւի ու ճերմակի խառնուած մը, ուրկէ կը գոյանար հրաշալի երկնային կոյս մը, որ սխալմամբ երկրի վրայ կը քալէր :

Սեփսեւ աչքերը խոշոր էին, մանկական միամտութեամբ մը ամբողջովին բացուած, ու զարմացած այտայայտութիւնով մը, և ժպտո՛ւն, մանկականօրէն ժպտո՛ւն :

Մերթ՝ այդ սեփսեւ խոշոր աչքերը՝ կարճատեսի շնորհալիութիւնով մը՝ կը պզտիկեցնէր, կը պզտիկեցնէր և անակնոց կարճատեսի նման կը նայէր :

Շրթունքները, բարակ ու կասկարմիր, սիրոյ քերթուած մըն էին ամբողջ, սիրատենչ սիրտի մը ըզձանքներովը թրջուած ...

Ի՛նչ մը գիրուկ էր, ո՛չ ա՛յնպիսի բարձր, հազիւ տասնըվեց տարու ... :

Հայերէն կը խօսէր սպասուհիին հետ :

Այդ պահուն չէ՞ք գիտեր ի՛նչպէս աչքս մտաւ հայերէն լեզուն, որուն ներդաշնա-

կութեանը մասին մեծ գաղափար մը չունէի մինչեւ անցած կիրակի օր:

Սեւ փլիււէ ժազէթ մը հագած էր, սեւ չրջազգեստ, սեւ ձեռնոցներ և բոլոր այս սեւերը ա՛յնչափ կը վայլէին իր թուխ-ձերմակութեանը որ...

Առատ մազերու վրայ կը կենար կնոջական ահագին աղւոր գլխարկ մը, բարձր փետուրներով, որոնք մասամբ կը սրբազրէին հասակին միջակութիւնը:

Սպասուհին հագուած էր...

Բայց, անցնի՛նք սպասուհին վրայէն, որովհետեւ սիրտին վրայ բարի կամ գէշ ազդեցութիւն մը չգործեց ան ամենեւին:

Ընդհակառակը, ահագին հայհոյանք մը ուղղեցի անոր հասցէին:

— Անպիտանը եթէ հետը չըլլար, թերեւս կրնայի խօսիլ...

Օրիորդը ինծի նայեցաւ և ժպիտ մը — ո՛հ, անպատմելի երջանկութիւն — ժպիտ մը թառեցաւ անոր կեռաս շրթունքներուն վերեւ:

Նայուած քներու այս բախուումէն առաջ եկած ելեկտրականութենէն արքիւռ, քիչ մընայ այս ժպիտը զիս պիտի մեռցներ:

Քանի որ ժպտեցաւ, ուրեմն ուշադրութիւնը յաջողած էի գրաւել, քանի որ ժպտեցաւ, ուրեմն... զիս կը սիրէր թերեւս:

Ա՛յսչափ տրամաբանութիւն բաւական եղաւ դարձնելու համար զիս իմ ճամբէս և փոխանակ դէպի վար երթալու, սկսայ դէպի վեր ելլել օրիորդին ետեւէն, մինչ սպասուհին ականջին բաներ մը կը փսփսար ան...

Իմ վրաս կը խօսի կոր, եղաւ մտածումս և այս մտածումը զիս բոլորովին գինովցուց: Կեանքիս մէջ առաջի՛ն անգամ ըլլալով սիրտս սկսաւ բաբախել:

Թէեւ ամէ՛ն օր ալ կը բաբախէ, բայց ողջ օրուան բաբախումը տարբեր էր միւս օրուան բաբախումներէս:

Կը կարծէի թէ կուրծքս պիտի ճաթէր, և եթէ չճաթեցաւ, ասիկա կը նշանակէ որ բաւական զիմացկուն կուրծք մը ունիմ:

Մանրիկ էին օրիորդին ոտքերը, ձեւաւոր և նոր կոշիկներու մէջ, և իմ մեծագոյն սովորութիւններէս մէկը կը կազմեն կինբոլ ոտքերը:

Կրնամ դիմանալ բոլոր գեղեցկութեանց

և ամէն տեսակ փորձութեանց, բայց երբ նշմարեմ աղւոր ոտք մը, je suis f... ichu!

Կը խնդար օրիորդը սպասուհին հետ:

Պզտիկ վախ մը մտաւ ներսիդիս:

— Արդեօք իմ վրաս կը խնդայ կոր, ըսիրն քնիւրենս:

Բայց շուտով փութացի սրբազրել այս մտածումս, որովհետեւ մարդիկ չեն յօժարիր իրենց անձին վրայ խնդալիք բան մը տեսնելու:

Ու շարունակեցի քալել օրիորդին ետեւէն: Յիշեցի նախկին յօդուածներէս մէկը ուր դատաւարտած էի անմտօրէն զանո՛նք, որ կրննորու ետեւէն կը քալեն՝ մաս յուսալով կարկանդակէն:

«Ի՛նչ կը հասկնաս արդեօք այս անշահ հետապնդումէն» — հարցուցած էի այն ատեն անխելքօրէն:

Անշահ հետապնդո՛ւմ մի...

Որչա՛փ սխալած ըլլալս անցած կիրակի օր միայն կրցայ հաստատել:

Հերուանց գեղեցիկ կին մը կամ աղջիկ մը հետապնդելու չափ հրապուրիչ բան չկայ աշխարհիս երեսը:

Ասիկա թէեւ քիչ մը անտես-աղքօր երեւոյթը կուտայ մարդուս, բայց հաճոյքը անփոխարինելի է:

Ու յարատեւեցի քալել օրիորդին ետեւէն, սկզբունքի տէր մարդու մը նման:

Օրիորդին պզտիկ տոտիկները չէին յոգնել, մինչ իմ խոշոր տոտիկներս յոգնած էին շատոնց:

— Այս աղջիկը քալելու համար սքանչելի յատկութիւն մը ունի, խորհեցայ... հայերէն լեզուով:

Վերջապէս, Շիշի, փողոցէ մը վար դարձաւ:

Փողոցին անկիւնը սպասեցի և տեսայ անոր հոն տուն մը մտնելը, որ իր տունը չէր ապահովաբար, որովհետեւ գլխարկով եկաւ նստիլ պատշգամբ:

Ժամացոյց ի ձեռին, ճիշդ չորսուկէս ժամ սպասեցի մահալլեպիճիին խանութը:

Մարդոց խանութը պարապ տեղ լեցուցած չըլլալու պատուաբեր զգացումով, պռաջին կէս ժամուն երկու հատ լէմոնատ խմեցի, յետոյ մահալլեպի մը կերայ, այնու-

հետեւ՝ թափուղ-կէօքսիւ մը, վերջէն՝ էք-
մէք-գաթաիֆի, ապա՝ թէլ-խաթայիֆի, քիչ
մը պաղ հաւի միս, սիւտլաճ, եւլն. եւլն. :

Եւ ստամոքսս չատոնց մահալլէպիճիի մաս-
նածիւղ մը դարձած էր, բայց օրիորդը դեռ
իր այցելութեան գացած տունէն դուրս չէր
ելած և միշտ իր ահագին գլխարկովը կը
նստէր պալլօնը:

— Արդ, կնկան այցելութիւնները ահա՝
ասանկ չեն յաւէտ վերջանար, մտմտացի, կար-
ծեմ իրաւամբ:

Ուրիշ ամէն աղգէ կիներ երբ այցելու-
թեան երթան, որչափ ալ մտերմական ըլլայ
այցելութիւնին, մէկ երկու ժամէ աւելի
չեն նստիր, և եթէ նստելու միտք ունենան,
գոնէ գլխարկին կը հանեն, բայց մերինները
երբ ունէ տուն մը երթան այցելութեան,
գլխարկին չեն հաներ և օրերով կը նստին:
Դոնէ եթէ գլխարկին հանէին, փողոցը զի-
րենք սպասողը յոյսը կը կտրէր և կ'ելէր
գործին կ'երթար:

Ու օրիորդին այցելութիւնն ալ կը յաւի-
տենականան, ինչպէս ամէն ինքզինքը յար-
գող հայու կնկան այցելութիւն:

Հայու կնիկ մըն էր ուրեմն անիկա:

Այո՛, հմայիչ հայու կին մը ըլլալ սահ-
մանաւած էր իմ գեղուհիս, և ահա՛ այս
մանրամասնութիւնն էր որ զիս բոլորովին կը
խենդեցնէր:

Շատ հայու աղջիկներու հանդիպած եմ,
որոնց մէջէն աղուորները պակաս չէին, և
ի՛նչ աղուորներ, մանաւանդ անո՛նք էին ո-
րոնք է՛ն քիչ կը նմանէին հայու կնոջ:

Բայց, այս պարագային բոլորովին հա-
կառա՛կը, այս աղջիկը բոլորովին հայու կը-
նոջ գեղեցկութիւնն մը ունէր և — զարմա-
նալի՛ հրաշք — առաջին անգամ ըլլալով
հայուհի մը զիս իր հրապոյրներուն գերի կը
դարձնէր:

En attendant, այս խորհրդածութիւնները
ընելով, կը սպասէի մահալլէպիճիին խանութը:

Բարեբաղդաբար, մահալլէպիճիները սո-
վոր են խանութնին չզոցել, ապա թէ ոչ
մարդիկը չատոնց վեց գիրը դրած պիտի ըլ-
լային ինծի:

Կէս գիշերին էր, երբ յուսահատած, վե-
րադարձայ Բերա:

— Գիշերը հոն մնացած ըլլալու է, խոր-
հեցայ ինքնիրենս:

Բայց եթէ գիշերը այդ տունը պիտի ան-
ցնէր, ինչո՛ւ գլխարկը չհանեց, — չկրցայ
մեկնել, ես որ Աւետարանները կրնամ մեկ-
նել ձեզի:

Մինչեւ լոյս հայու աղւոր աղջիկը երա-
վեցի, և քունիս մէջը ոտանաւոր մը անգամ
գրեցի անոր վրայ:

Հետեւեալ առտու — ո՛վ ճակատագրա-
կանութիւն — հանդիպեցայ անոր ուրիշ հը-
րապուրիչ կնոջ մը հետ, որ երկու կաթիլ
ջուրի պէս կը նմանէր իրեն. — քոյր ըլլա-
լու էր:

Ամօթէս կաս կարծիր կտրեցայ:

— Ահաւասի՛կ սէրը, ըսի, ես որ մինչեւ
այսօր չիկնիլ բառին ի՛նչ ըլլալուն կ'անգիտա-
նայի, մանկապարտէզի լաճի մը նման կը
չիկնիմ կոր:

Ու իրաւցնէ ամչցայ ինքզինքէս

Անցած օր երբ ժամ գացած էի, միշտ
զայն գտնելու յոյսով, յանկարծ — ո՛վ սիր-
տըս, ցայտէ՛ բարախէ — տեսայ որ ներս կը
մտնէր տարիքոտ յարգելի կնոջ մը հետ, որ
իր մաման ըլլալու էր անկասկած:

Շիկնեցաւ, և ժպտեցաւ:

Շիկնեցայ, և ժպտեցայ:

— Կասկած չկա՛յ, խորհեցայ, այս աղ-
ջիկը տկարութիւն մը ունի ինծի հանդէպ:

Ու հոգիս անպատու՛մ ուրախութիւնով
մը լեցուեցաւ:

— Վերջապէս իմ ալ կարգս եկաւ սիրե-
լու, սիրուելու ...

Եւ երկրորդ ոտանաւոր մը շինեցի օրիոր-
դին վրայ:

Իրիկունը բարեկամի մը հանդիպեցայ:

— Հէ՛, Թօլա՛, ըսաւ չարաճճիօրէն,
այնինչ օրիորդին սիրահարուէ՛ր ես:

Պապանձումն Չաքարիայի եղայ:

— Առտու իրիկուն առջեւէն ետեւէն կը
պտըտիս կոր:

Միշտ պատասխան չկայ իմ քովս:

— Վա՛հ, Թօլա՛ս, վա՛հ ...

— Ի՛նչ, կը ճանչնա՛ս կոր, հարցուցի վեր-
ջապէս հետաքրքիր:

— Քի՛չ մը, երէկ ինքը պատմեց որ ...

— Իրա՛ւ, բացազանչեցի անհուն հաճոյ-

քով մը և ինձով զբաղած ըլլալուն համար
երջանիկ:

— Ըսաւ թէ... վրադ չա՛տ խնդացեր է:

— Ինչո՞ւ, ըսի՛ յանկարծ լալու փափաք
մը զգալով մէջս:

— Որովհետեւ անուշ ակնարկներ ուղղեր
ես իրեն:

×

Ո՛վ փլուզում կա՛վռօջի սիրոյն:

Աղուոր անձանթութուհի՛ս, զոր պղատոնա-
կան սիրով մը սիրեցի, արդարացի արարք
մը ըրիր վրաս խնդալով, քանի որ ես ալ
ա՛յնչափ խնդացած եմ ուրիշներու վրայ:

Միայն գիտցած ըլլաւ որ չափազանց վի-
րաւորեցիր սիրտս, որ քեզի համար միայն
չը բարախէր... մէկ վայրկեանը 650 ան-
գամ:

Ինչո՞ւ խնդալ վրաս, որովհետեւ քեզի
սիրահարուեցայ:

Միթէ՛ սէր ըսուածը կանոն կը ճանչնա՛յ,
երբ մարքիզուհիներ գնչու ջութակահարնե-
րու կը բռնուին և դուքսեր հովիւներու:

Գիտցած ըլլա՛ս որ միակ հայու աղջիկն
ես որուն կա՛վռօջը սիրահարուեցաւ:

Կրնա՛ս պարծենալ:

Եւ երբ օրին մէկը, երբ վիճիս ապագայ
ամուսնիդ հետ — ո՛վ գիտէ ո՛ր անձարակը,
որուն բերանը պիտի իյնաս, ինչու որ «պտու-
ղին աղեկը լերան արջերը՝ կը ճաշակին» —
պիտի կրնաս ըսել անոր ճակատաբաց.

— Ինձի նայէ՛, ինձի նայէ՛, իմ յարգս
աղէկ ճանչցի՛ր, ասկէ քսան տարի առաջ
Երուանդ Թօլայեան ինձի համար կը սատկէր
կոր:

Ասիկա թէեւ պատիւ չի բերեր ինձի:

Բայց, կը փափաքիմ այս պարծանքը տալ
քեզի, աղուոր հայու աղջիկ:

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ

Ի ՄԵՌԵԼՈՑ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ իր Պատ. Բաժանոր-
դաց եւ Ընթերցողաց Ս. Չասիկը շնոր-
հաւորելով երջանիկ տարիներ կը մաղթէ:



ԵՐԲ ՊԻՏԻ ԿԱՐԳՈՒԻՍ

Ե՛րբ պիտի կարգուիս, կ'ըսեն բարեկամ-
ներէս ոմանք, այն տեսակ շեշտով մը՝ որ
կարծես թէ իրենցմէ կնիկ ուզած ըլլայի, և
կամ իմ չի կարգուիլս իրենց մեծ տէրս մը ե-
ղած ըլլար:

Շիտակը ըսէք, տարօրինակ չէք գտներ
այս տեսակ հարցում մը:

Մարդիկ դարմանալի են, ուրիշին գոր-
ծովը զբաղինք կ'ըսեն ու հոգիներն կուտան:

Ասանկ հարցում մը գոնէ կինները ընէին,
այն ատեն խաբս չ'էր մնար, և տալիք պա-
տասխանս ալ ձենէ չ'էի սպասեր:

Իրաւ է թէ կարգուիլը աղէկ բան է կ'ը-
սեն, սակայն ինչ ինչ պարագաներ կան՝ որ
քիչ մը չ'է՝ այլ չափէն աւելի անտանելի կը
դարձնեն այդ կեանքը:

Կ'ամուսնանաս, առած աղջիկդ շատ փա-
փուկ մեծցուցած կ'ըլլան, դաշնակէն ու ու-
մանէն զատ ուրիշ զբաղումէ չի հասկնար,
սեղանը քեզի շտկել կուտայ, ինչպէս նաեւ
պնակներուն լուարը:

Մարիկդ երբէք մարդու տեղ չի դնէր,
ինչու որ ինք ուսումնական է ու հետը այ-
ցելութեան երթալու կը դժկամակի, չփա-
ցած աղջիկ մը որ այնչափ կըլլայ, ըսէք այլ
եւս կրնա՞ք գտնել ամուրիութեան երջանիկ
ու ազատ օրերը:

Բարեկենդանը վրայ կը հասնի, կինդ կ'ու-
ղէ մասխառայ ըլլալ, դուռն կը հակառակիս
և որովհետեւ կինները իրենց խօսքը անցընել
տալու համար հոգի կուտան, քեզի կը պառ-
կեցնէ ինքն ալ սանկ քովիկդ եան կուգայ
ու հաղիւ թէ քնացած ես անիկա կծիկը կը
դնէ դրացւոյն տղուն հետ մասիկ ըլլալու:
(Այս առթիւ տես Հանրագիտակ թիւ 26 Լիւախ
յօդուածը որ սպառած է):

Օղերուն հետ քսակներուն ծայրերը կը
բացուին, ինչու որ կինդ գլխարկին տեղ

ըլլալը կ'առարկէ ինչպէս նաեւ նեհեզ բերած հագուստները: Ատոնցմով ժամանակը անցընենք նէ չըլլար խուշս կ'ըսես, դէմքը կը կախէ, որով կ'ստիպուիս ելա՞ս գլխարկ մը առնել Բառէէն ու ձեռք մը հագուստ կ'արել տալ Մատամ Զապէլին՝ Grand rue de Péra:

Կարգուելէդ վեց ամիս յետոյ հայիւ կ'ընես թէ ճամբորդը տակաւին քանի մը ամիսէն հաղիւ պիտի կրնայ հասնիլ նաւահանգիստ ու ըստ այնմ կը կարգադրես գործերդ: Սակայն ինչպէս որ կ'ըսեն «էվտէքի բազար չարչըյա ուլմազ» անանկ ալ եօթերորդ ամսոյն սկիզբները դիչեր մը երեքալէն տուն երթալուդ քեզ կ'աւետեն թէ՝ տիկինդդ երկունքի ցաւերով կը տառապի, սենեակ կը մտնես ու կը տեսնես թէ տիկինդ ոտքերը տնկած — նմանցնել չ'ըլլայ — ժանտաներու պէս կը պոռայ կոր:

Յաւերը երթալով կը շատնան, մատամ Սաժ Ֆամը մինակը չպիտի կրնալ պեծերելը փափկօրէն կ'զգացնէ: Անմիջապէս կը վազես բժիշկ կանչելու, ու ճամբան անգամ մը կը հաշուես վճարելիք այցեգիններդ ու գրպանիդ պատրաստը:

Զար բախտէդ աղջիկ մը պարգեւելու ձանձրոյթը կուեննայ քեզի ազնուափայլ տիկինդ:

Դիտելու արժանի չ'ըլլա՞ր այդ պահուն սուռաքիդ ձեռք, քանի որ աղջիկ զաւակ մը ունենալը ուրիշ բան չի նշանակեր հօր մը համար, եթէ ոչ՝ ստորագրել հինգ հարիւր ռսկինոյց մուրհակ մը՝ վճարելի քսան տարիէն:

Եւ որովհետեւ տիկինըդ կաթ տալով անհանգիստ չ'ըլլայ, կը պատրաստուիս սիւսանա մը բռնել, ու մի եւ նոյն ժամանակ զուկիդ սիրոյն հահար պլոծալաներով ու Սէթ Ֆօնի գարեջրով սնուցանել այդ Պարտիզակցի կինը:

Առջինէկին կնուէրը զօղու ընելու է, եանի ամօթ կ'ըլլայ կ'ըսեն, պիտի համակերպիս ճար չկայ, եթէ չես ուղեր տեղի տալ և արդէն ուրիշ կերպ չ'ըլլար, կանանց հետ դիւրաւ գլուխ չ'ելուիր:

Ենթադրենք թէ մէկ հատով հաշիւդ պիտի փակես և կամ հիմակուան վաճառականներուն պէս տուած փաւնցներդ անցիւլէ պիտի ընես:

Աղջիկդ տակաւ կը մեծնայ, թաղին վար-

ժարանը պէտք եղած կրթութիւնը ու մտային պաշարը չի կրնար հայթայթել, օտար դպրոց մը ղրկելու է գոնէ կտոր մը լեզու կը սովորի ու դժուարութիւն չի քաշեր ... առիթը ներկայանալուն:

Տիկինիդ պնդումներուն վրայ բացէն դաշնակի համար կը համաձայնիս դաշնակահարի մը հետ, յատկացնելով ամսական վաստակիդ մէկ մասը:

Սմբատ Բէսէճեանը բօլքա մը յօրիներ է, Բաբելեանը Vers l'avenir մը կը պատրաստէ կոր, ասոնց ամէնքն ալ հնայիի պէս տուն պիտի տանիս, աղջիկէդ աւելի տիկնոջդ հաճելի երեւնալու համար:

Ուրիշ մտմտութեամբ մ'ալ, այսինքն՝ «որի հետ պիտի տեսնուի» ի խնդիրը:

Այս օրուան օրս երկու աղջիկ իրարու քով գալերնուն մէկգմէկ գլխէ կը հանեն ու մեր չի գիտցածները étude կ'ընեն կոր, ի՞նչ պիտի ըլլայ արդեօք ասկէ տասը տարի ետքը:

Հապա այն կարգ մը երկայնամազ պարոններուն ձեռքէն քաշելիքնիս, որոնք մարտի կատուներու պէս աղջիկ եղող տան մը բոլորտիքը կը սլքտան:

Ասոնք ամէնքն ալ մէկդի ձգենք ու ծայրէն սկսինք եթէ կը հաճիք, ինչու որ ուրիշ խնդիր մը կայ, որ ըստ իս՝ ամէնէն կարեւորն է և ամէնէն աւելի ջիղերս ոտք հանողը:

Գիտէ՞ք, այն ալ ինչ է, եպեղեցւոյ մէջ պսակ եղած միջոցիդ կարգ մը անհրաւէր հանդիսատեսներու ներկայութիւնը:

Անցեալները տան մը առջեւէն անցած պահուս Տէրպապաի մը կարգալու ձայնը առի, արդեօք մեռել կայ կ'ըսէի ինքնիրենս, մէյ մ'ալ դուռը բացուելով տասը տարեկան աղջիկ մը երեւցաւ: «Հապէրի չօնուզսան ալ» կ'ըսէ առածը: Իսկոյն մօտեցայ ու աղջիկս ըսի, վերը ի՞նչ կայ:

— Ի՞նչ պիտի ըլլայ ըսաւ, հարսնիք կայ: Տանը մէջ հարսնիք մի՞ ...:

Վերջէն հասկցայ որ չորրորդ ամուսնութիւնը տանը մէջ կը կատարուի եղեր:

Ի՞նչ բարեբախտութիւն ...:

Արդ՝ conclusionը հետաքրքիր ընթերցողներու կը թողուի:

ԷՆԺԷԱ

ԽԱՆՈՒԹՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Բնութիւնը մարդուն հետ այնպիսի ներգաշնակութիւն մը ունի, որ երկնորեակներու պէս մի եւ նոյն ատեն մի եւ նոյն կերպով իրարմէ կաղդուին անոնք: Ձմեռը բնութիւնը կը կծկուի, կը պաղի, կը չորնայ, մարդիկ ալ նոյնպէս կը քաշուին, կը փափանան, կը տխրին, ամառը բնութիւնը կը զարթնու, կ'ոգեւորուի, կը կանաչնայ, մարդիկ ալ այնպէս կը զուարթանան, կը սթափին ... կը կանանչնան:

Եւ հիմա որ գարնան սեմին վրայ կը գտնուինք՝ դիտեցէք, չորսդինիդ թարմութիւն մը պիտի տեսնէք, ամէն բան նոր պիտի գտնէք, ամէն կողմ կանանչ, ամէն կողմ շէնչող, ինչպէս նաեւ մարդոց մէջ նոյն կանանչութիւնը՝ նոյն նորութիւնն է որ գրաւած է դիրքինք:

Ամէն բան նոր է մանաւանդ սա Չատիկ շարթուն՝ որ գարնան կուգայ, նոր հագուստ, նոր կոշիկ, նոր շապիկ, նոր կնիկ ... ներեցէք իկ իկ ըսելով լեզուս սահեցաւ, յիշելու բառ մը որ ինքնին կարծեմ պատճառեց ձեզ ցաւ ...:

Աւետարանը կըսէ և պատկերը ցոյց կուտայ որ մենք Քրիստոնեաներս կը հաւատանք թէ՛ Չատիկին Քրիստոս երբ յարեաւ, ճերմակ շաւիկ մը միայն ունէր վրան, պարզ միակտուր, և այն կիները՝ որոնք Աստուածորդւոյն համբառնալը դիտեցին ու տեսան, անոնք ալ մէկ մէկ պարզ վրանոցներ հագած էին, մէջքերնին գօտիներով մը սեղմուած, արդ, ինչո՞ւ արդեօք դարեր ու դարերէ վերջ մեր կիներն ու այրերը, նոյն այդ նուերական օրին՝ անպատճառ նոր կուզեն հագնիլ, նոր ու պճնազարդ, և ասոր համար օրերով կը յոգնին, կը տատին, կը բանին, կը վատնեն, կը մտնեն և կը զարգարուին այնպէս՝ ինչպէս կը զարգարեն Շթանիկ և Մայէռի քուլաները ... Ի ցոյցս մարդկան, լոկ ըսել տալու համար թէ՛ այսինչ քօսթիւմը տեսա՞ր ... Մատամ Գալիվուսիին կարածն է, այնինչին քօսթիւմին հաւնեցա՞ր ... Պօթէսիին է, եւայլն: Մինչդեռ իրականու-

թեան մէջ՝ ո՛չ Գալիվուսիին է, ո՛չ ալ Պօթէսիին, ալ՝ Էսկիճի Մուշոնինը ... մէկ երկու տարի վերջը:

Այսպէս ուրեմն մէկ երկու շաբաթէ ի վեր Բերայի շիտակը կը վիտային ճիճի-պէյիճի ընտանիքներով, որոնք մարապետներու դերամ ժողուելուն պէս՝ խանութէ խանութ կը պալ ... իկին ի խնդիր նորին՝ ճիշդ օրը օրին:

Եւ կարծեմ թէ մեր սիրելի ընթերցողները Չատիկան երեք օր կիրակիներէն գէթ մէկ քանի ժամ զբօսնելու համար երբ բաւական զուարթօրէն նկարագրենք հոս այդ կարգի ընտանիքի մը հագուստին սիրահատումը, աւելորդ բան մը ըրած չենք ըլլար. ուրեմն սկսինք:

Բայց ներեցէք որ սրկառս վառեմ, որովհետեւ առանց ատոր չեմ կրնար արտադրել սա ալ իմ մեղքս:

* * *

Սուրբիկ և Բուբուլ, իրենց Մարիէնէ մօրկանը առջեւէն՝ Գուլ-գարուէն վեր կելլային այն օրը երբ Սիմօնիկ աղա, չի կրնալով դիմանալ իրենց անվերջ կուզեմներուն, մէկ երկու ոսկի տուած էր պէտք եղածը դնելու համար:

Տաք հարաւային հով մը կանակնուն փըլ չելով անպատկառօրէն թոյլ կուտար որ ետեւնուն եկողներն արծակ համարձակ դիտեն բիրէի կեղտուկները ծթած միւսօններուն վրայ, ալ կրնաք երեւակայել թէ ի՞նչ տեսակ և ո՞ր դասակարգին հետ պիտի ըլլայ գործերնիս:

Պողոտային երկու կողմի խանութպանները՝ որոնք իրենց արհեստին բոօփեսքօնները կրնան համարուիլ, կուսնելով թէ այդ էգ եռօտանին՝ քուրջի կտորի ոսկի ձգելու համար այդ տեղուանքը եկած են, անդադրում կը հրաւիրէին կը պողային կը կանչէին, որպէս զի տարիներով թէղկեաններուն տակ մնացած սքօնները քշեն սուղ սուղ:

— Աղջիկներ, անանկ պողազ ալանի պէս վրայ միշտաք, ծանրէն քաշուեցէք, սէպէք իջրորդութան ժամը ուխտի կերթաք կորի

պէս հիշ պէլի մընէք քի ֆիստանցուի հա-
մար վեր կելաք կոր տէրի, կըսէ Մարեէնէ,
որուն գլխարկը հովէն ծռած ըլլալով մէկ
ֆլէշ մը միայն կը բռնէր թեթեւակի:

— Տուտու, դուն մի խառնուիր, մենք
գիտենք ընելիքնիս, շարխային թխիկը մի
դառցունէր կէնէ ...

— Ի՛նչ խալթ կուզէք նէ ան կերէք, ես
չէի ըսողը կըսէ ու ճամբան կը շարունակէ,
գիտնալով անշուշտ իր թէսթէ պաշի հոգե-
հատորներուն կոլաօսն:

— Բուրճու, աճապ սա մաղազան մէյմը
մտնա՛նք, կըսէ Սրբունի՝ քրոջը ...

— Ամա՛ն դուն ալ, շիտակ Օլիօնին եր-
թանք քի կէնէ խաղըլը չուտենք, գիտնա՛
եա, անցած տարի պարթի պաները առինք
տէ վրանիս խնտացուցինք նէ ...

— Ամա՛ն դուն ալ պէֆք է, տահա վա-
խիթ ունինք մէյ մը մտնանք, ըսելով խա-
նութէն ներս կը մտնան, մինչ պաշտօնեայ-
ները ճանճ կը քշէին մէկ մէկ կողմ քաշուած:

— Պուլուրուն մատմաղէլ, Բասգալեալըգ
կիւզէլ գումաշլարըմը տա վար, նուլօթի,
մա նէ՛ մալ նէ մալ ...

— Պիգ Բասգալեայ իչին ալմահաճալը,
չէօյլէ պիր կիրտի՛ք քի ուշկուն պիր շէյ
վա՛րսա ալալըմ տէրի ... աղէկ չըսի քա
Բուրճու ...

— Քա՛ աղջիկս աղէկ ըսիր ամա՛, ատ կա-
լանթօնութին է, կէօյհամ քի տիք պօյէր-
նուդ սրբավարտի խաթ խաթ ունիք տէնո-
րէն կառնէք կոր, հէրիֆը մէկ զէնկին կը
գիտնայ՝ կօթ ու պատիւ գին կուզէ, կըսէ
մայրը քրտինքները սրբելով կոզոտ թաշկի-
նակով մը, որուն մէջ առտուն Սիմօն աղան
մէկ երկու սթոխտայ հանած էր:

— Սուս ըսինք, դուն մի խառնուիր, ես
գիտեմ կոր ըսածս ...

— Պուլուրուն, բէք կիւզէլ պիր գումաշ
սօն մօտա, իփէկ կիպի ...

— Վազ անցիր աղջիկս երեսիդ չերթար,
զաթը էսմէր ես, բիւս բիւթինէ ճէնկեառի
պիտի երեսաս ...

— Պաշկա՛, պաշկա՛, կըսէ օրորդը ձեռ-
քին մէջ ասդին անդին դարձնելով կերպասը,
պաշկա՛ ...

— Չօգ վար մատմաղէլ, պուլուրընըգ
իչէրի ...

— Քա ո՛ւր կերթաք կոր ... կեցէք նա-
յիմ ... ըսելով մայրը ոտքի կելլայ ...

— Հոս ենք ճանըմ, դո՛ւն ո՛ւր կուգաս
կոր ...

— Նասըլ հոս էք, կէօղ կէօրէ ներս կը
քաշեն կոր, մեղա՛յ ... հետերնիդ չիգա՛մ ...

— Ուումաշ պիտի նայինք տուտու, մենք
հիմա կուգանք ...

— Փարազա հոս նստէիք, մէջէ մէջ տեղ-
ուանքը երթա՛լը ինչ է ... չօգ շէյ ...

— Ներսը սալահանա չէր իրաւցունէ ...
մեզ մոռթելու չեն ...

— Ի՛նչ կուզէ ան ըլլայ, ես ձեռքի ատ
պօյը բերեր եմ նէ կէճէ սէֆաի պէս, մատ
մը վրանիդ դպցնող տէ սօլտուրմիշ ընող
մը չէ եղէր, ասանկ մէկ սահաթի չեմ կըր-
նար կոր բերէր, հայտէ նայիմ ... մենք ծա-
ներս հանել մի տաք ինծի ...

Սպասաւորը կուհելով թէ մայրը չուզէր
որ օրիորդները վաճառատան ներսի կողմը
երթան, խօսք կառնէ,

— Ա.ֆ էտէրսինիդ մատամ, պուրտա տա-
հա նէ պէօյիւք ֆամիլեալար կելիր, նէ կիւ-
զէլ բիլիճ կիպի գըզլար, եալընըգ պաշլարը-
նա կէչէր ախսուաթա էտէրլէր, սիգ նէ
զաննէտէյօրսընըգ ...

— Սա նայէ, սօնը սօնը ըռէգիլ ըրի՛ր
սըւոր սըտեղը հա՛ ... կայնէ դուն, մենք
ալ ֆիթիլ ֆիթիլ քիթէդ չի հանենք նէ մարդ
չըլլանք ... կըսեն օրիորդները սրանեղած և
կասկապուտ եղած ...

— Նաղմա եօգ, պէն ծնլարը Ամասեա
խնծորը կիպի բամպուզլար իչինտէ պէօյիւթ-
միւշիւմ, հէմտէ, պիր եիւզլէրինէ պագ,
պէօյլէ թըֆըլ գըզլար կէօրտիւշիւն վա՛ր մը
ըտը ...

— Քա մարի՛կ սուս եղիր, ամօթ կըսեն
բան մը կայ, վրաս գէշութիւն կուգայ կոր
կըսէ մի՛ծ աղջիկը Սուրբիկ չորս դին նայե-
լով ...

— Մէյէր եաղմա կա՛ր քի բըռըլ բըռըլ
ձեզ պիտի ձգեմ քի ներս դուրս տանին բե-
րեն, իրիկուան հօրերնուդ ի՛նչ ճուղապ տա-
լու է ... հէմ քալեցէ՛ք քալեցէ՛ք աստեղ

ույլուն մալեր չիգան, սա ուր տեղ ըսիք, հոն երթանք ...

— Նասը օլտու, պիր չէյ ալմայաճագ-սընըլ մատմաղէլ, կըսէ մարդը, ակումները սրելով հինօրէնք մօրերնուն ի տես, որ բէ-չերը թոթուելով մեկնելու կը պատրաստուէր:

— Շիմտիլիք պաշկա չէյլէր պալըմ տա տէօնիւշիւն օղրարըզ ըսելով՝ համակ կրակ կտրած դուրս կելլան խանութէն:

— Հաւնեցա՞ր սա ըրածի՞դ հէ՞ ... սը-տեղն ալ ըրածդ ըրի՞ր ես ...

— Հապա ի՞նչ գիտցաք ... ես եէնի մօ-տա մարերէն չեմ քի սուտ քուն ըլլամ տէ պօստանի ճուրի պէս ձեզ սալմա ձգեմ ... եաղմա եօգ ... առ բամպակը անկաճներ-նուդ հանեցէք ...

— Ատտար սըխըն կը դնե՞ս ամա ետքը բիւշման կըլլաս տուտու, դուն գիտես ...

— Հախ ունիք, իրաւ քի հախթինս կը դնէք ամա, կըցածիս խըտար դէմ պիտի կամ ...

— Բէք աղէկ, մենք չէինք ըսողը, ետ-քը բիւշման չըլլաս ...

— Բէք բէք մարդ պիտի սիրէք փախչիք պիտի տահա՞, ես ալ ճէնէգնեհնուդ մասրա-ֆէն կազատիմ ... բօստալ չունեմ, իլք պա-հարը տեսաք նէ խըզղըն ծինեհու պէս ազ-միշ եղաք, ամա չաբուխ սինտիմիշ կընեմ ես, ինծի Մարեէնէ կըսեն:

Եւ այսօրինակ կուրներով վեր կելլեն Բերա, մինչեւ Օ Լիօն, ուր ներս մտնալ-նուն կը տեսնեն թէ ահագին բազմութիւն մը գրաւած է չորս դին, և պարապ պաշտօնեայ մը չիգայ որ իրենց նայի:

— Ա՛ս ինչ է ... ամէն ալ մեր օրին պէքէյէր են ... չօգ չէյ ըսելով՝ տիկին մայրը մէկու մը կը դառնայ ու կըսէ,

— Պի՛ղտէ ախսուիթա էտէճէյիզ, պիզէ-տէ պագըն ...

— Բօլի գալա, էլա Թանաշի, գիթաքսէ ի մատամա թի թէլի՛ ...

— Նէ իսթէտինիզ մատամ ...

— Զատիկիկ պիւրէր բօլքալը ֆիստան ետքաճագլարտա գըղլարըմ ... ծնըն իչին կէլտիկ ...

— Բա ի՞նչ կըսես, Զատիկիկ կը ինչ է ... պանա պագ միւսիւ էյի եունու վա՞ր մը ...

— Վար մատմաղէլ, պույուրըն աաան-սեոնէ ըսելով՝ վերելակը կառաջնորդէ, պու-յուրընըզ ...

— Ա՛ս ինչ է, քիւմէ՛ս է ինչ է ...

— Մտիր ճանըմ ...

— Բա մտնա՞մ ամա, չը գիտցած տեղս նասըլ մտնամ, էճէլ պէշի՛ է, ի՞նչ է ... էյ մանտրու՞ք ... հիշ աւրած փարայ չունիմ, պանա պագ մէճիտիէ պօղարսըն ... ուֆազըզ եօ՛գ ...

— Փարաիւն տէյիլ մատամ, կաթիս ...

— Ի՞նչ ըսաւ, կետինին տակը ասնիք քի պօյերնուդ վեր խալթեր կուտէք կոր ... ը-սելով ներս կը մտնան ու մեքենան կսկսի բանիլ:

— Ա՛ստուածամարըս ... էկնաւոր Փրկիչ ... քա վեր կելլանք կոր ...

— Սուս ճանըմ, վերի խաթը կելլանք կոր ...

— Բա ի՞նչ տեղը կար քի էվէլ էվէլօք մասրաֆներ ընէինք տէ, ասանկ առլէֆլի տեղէ ախսուաթա ընէինք, գիտէք կոր քի պէտէհավա՞ է ...

— Ինչուդ պէտք ճանըմ, ըսահաթըզ նայէ, հէմ ալ սուս եղիր, պապանծէ՛, կը-սեն օրիորդները, որոնք շատ գիտեմճիու-թիւն կուզէին ծախել ... հակառակ ֆէրմ ժիւբերնուն տակէն կեղտոտ միսօնեհնուն ծայրերը դուրս ինկած ըլլալուն:

— Նլիր նայինք, եկանք, ելիր տէ մէկ թարաֆ մը քաշուէ նստէ, հոս վարի խա-նութը չըլմանիր, նայէ բիւթին չնորքով կնիկներ են գտնուողները, խախկ չ'ըլլանք:

Օրիորդները շիտակ սեղաններուն կը մօ-տենան՝ ուր մասնաւոր պաշտօնեաներ կեր-պամներ կը ցուցադրէին, մինչ Տիկին Մար-եէնէ, հոտ նստող կին մը գտնելով՝ աթուը անոր կը մօտեցնէ:

— Հրամանըդա՛լ ֆիստանցու առնել ես ելեր ...

— Մատամ ...

— Հա՛, մատամ ըսելու մոռցայ, ա՛ֆ կընէք, մենք ալըշմիշ եղած չենք տէ ...

— Բաղտօ՞ն ... Ժը նը քօմըղան բա, կը յարէ անծանօթուհին ժպտելով:

— Հա՛, Պէյօղլու մատամասի է եղեր ... էյ ի՞նչ գիտնամ, կլիսը պուշնուզ չիգա՞ն քի

ճաշնամ, ծուռ լեզու է եղեր ... , ըսելով
աթոռը կ'առնէ ուրիշ տիկնոջ մը մօտը կ'եր-
թայ... :

— Աս ի՞նչ խալապալը ի՞նչ խալապա-
լը... :

—

— Հրամանքնիդ աստեղացի էք... :

— Էվէթ մատամ աղնայօռւմ ամա պէ-
ճէնէմէմ... բոթիքիմ եօգտը... :

— Սանքի տէյօրըմ քի պու նէ՛ գտար
բազմութիւն տիր տէյի... :

— Էյ ֆէթ տը բագ տըռ տա օնըն իչին
հէն քէս մաստաֆա տիւշիւշ... :

— Սո՛ւս, սո՛ւս, սանքի Զատիկ տի՛ր
տէմէք իրթէյօրսուն, հագգըն վար, պիբի
տէ պէնիմ պաշըմտա, իշտէ իքիսիտէ կէտի-
լէր քի գումաշ ալսընլար տէի, գուզում
մատամա, սիգ օլտուգճա Պէյօղլու մատամա-
սըսընըզ, գօթքույօրում քի ալտաթարըր-
լար տա, բաշաւոա կիպի պիր գումաշ վէ-
րիւրէր... :

— Հիչ մէռաք իթմէյին մատամ, պու-
ռասը Օ Լիօն տըռ, հէն դէման նուվօթէ տիւ... :

— Աֆ էտէրսին ամա տիշլէրին էրեթի՛
տիր նէ՛ տիր քի պիր թիւուլիւ սօզուռ սէյօ-
լէյէմէյօրսուն... :

— Հայըռ... , պիդ ֆոանսըղճա քօնու-
շուռուզտա օնըն իչին տիլիմիդ ալըշմըշ տըռ... :

— Սիգ ֆոանսըղսընըզ քի... :

— Եօգ... :

— Իսմին նէ՛ տիր քի... :

— Լուցիգա... :

— Գօճանըն իսմի... :

— Պաթիսթ... :

— Ագլըմա սըղտըրամայօրըմ լամա՛, նէ
իսէ, զահէր Պէյօղլունըն քօնուշմասը տա
պաշկա թիւուլիւ տիր... :

— Աֆ էտէռսինիդ կիտէյիմ, ըսելով կը
մեկնի մօտէն, ու Տիկին Մարեկնէ մինակ
մնալով իր աղջիկներուն մօտը կ'երթայ... :

— Ի՞նչ ըրիք հաւնեցա՛ք պարէ... :

— Ախ տուտուս, մէկ հատ ֆիստանցու
մը կտրել տուինք քի, եանի հագնելու տէ
ժամ մը երթալու ըլլանք նէ, Ալիօնին թա-
խըմը եկաւ տէյի իսկէրմիները հազմաներէն
պիտի վազցունէն... :

— Էյ քա գինը... :

— Քառսուն զրուշ մէթոօն... :

— Հէ՛... եանի մէկ ֆիստանցուն քառ-
սուն զրո՛ւշ կեկայ կոր... :

— Մէկ ու կէս արշընը տուտու, նասը՛լ
մէկ ֆիստանցու... :

— Էյ քա փարա՛ն... առ խտար մը տու-
ա՛ւ քի, թօփը թօփը երեք օսկի կայ ճէպս
քի՛ ատոր մշշէն խութումին միտիան ալ
վրաս է... :

— Էյ կտրել տուինք, հիմայ ի՞նչ ընենք... :

— Քա ա՛ս էր մի խառնուրը ըսիք նէ,
հիմա ի՞նչ խալթ պիտի ուտէք... :

— Ամա տեանաս տուտուս, սանկ մէյմը
ծառքդ առ տէ խումաշ տեսիր, կուստօ սէ-
յիր ըրէ... :

— Դուն ալ քէսէս ծառքդ առ տէ մէ-
ջը սէյիր ըրէ քի խախկութիւնը տեանաս, տէ
հրամմեցէք նայինք ի՞նչ սպուր պիտի ու-
տէք... :

— Կայնէ նայինք, ինքզինքդ խայիպ
մընեք, խումաշը երկու լանք է, վեց վեց
մէթոօն տասուերկու մէթօն քի ամէնը...
չորս հարուր սէքսէն կը կտրէ, դուն էվէլ
փարայ չունի՛ս քա մայրիկ... :

— Քա երկու աչուընիդ քէօնալիքներ
ինչերնուդ, ինչերնուդ կիւվէնմիշ եղաք տէ
կըյրիւ տուիք... հէ՛... Աստուծու կրակին
քէպապցու բիճեր մը ձեղի... :

— Ոտքդ պագնենք տուտուս դուն գի-
տես... սանկ մէյ մը միտքդ պեր Վի ֆըշըր
ֆըշըր հագնելու տէ տիք պօյերնիս ցցած
ժամ մտնալու ըլլանքնէ ո՛ր աշկը աճապ չի
պիտի տեանայ տէ ո՛վ աճապ կոնակին օռ-
թաէն չպիտի ճաթի... :

— Հիմակուհիմա ճաթողը խաֆայիս թա-
սըն է... , սըտեղը երկու հատիկ օսկի պա-
հեր էի քի՛ երկու տարի տահա տունը մը-
նալու ըլլաքնէ՛ պախըճիի տամ տէ պիւլիւ
ընէ սեւերկիք տէյի, ան է քի ադ ֆիստան-
ներնիդ առտար ուշարի պան պիտի ըլլայ նէ
տամ տէ խալըսիմ ըսելով, կուրծքերուն տա-
կէն քրտինքէն փատած ծրարիկ մը կը հա-
նէ եւ մէջի դրամը արդէն ունեցածին վրայ
դնելով, կը վճարեն ու դուրս կիյնան... :

Եւ որովհետեւ ուրիշ կարգ մը բաներ ալ
պիտի գնէին, ուստի չիտակ չունչերնին ու-
րիշ խանութ մը կ'առնեն եւ հօն ալ՝ իրենց

մայրը աթոռի մը վրայ նստեցնելով կսկսին խանութին ներսերը պոյ պոյ պտտկիլ՝ ծրարն ալ մօրերնուն մօտը ձգելով:

Ազնիւ ընթերցողներս, սաչափ մը խրատականս ըլլայ ձեզի, միշտ ի միտ առէ՛ք թէ՛ ձենէ խելացի, ձենէ աչքաբացներ կը վխտան ձեր շուրջը: Խեղճ Մարեէնէն երբ յոգնած դադրած ու քիչ մ'ալ պահեստի դրամը վրայ տուած ըլլալէն սրտնեղած անտարբեր ու անձնամոռաց սիկառը կը ֆութէր, վարպետորդի յաճախորդին մէկը Օ Լիօն անունը բազէթին վրայ տեսնելով, անմիջապէս կ'առնէ՝ տեղը նոյն ձեւով եւ նոյն հաստութեամբ ուրիշ մը կը դնէ ճարպիկութեամբ մը որ կը վրիպի Տիկին Մարեէնէի աչքէն:

Օրիորդները չի կրնալով բան մը որոշել, ետ կը դառնան եւ իրենց մօրկանը հետ դուրս կ'ելլեն խանութէն. արդէն ժամանակը ալ ուշ ըլլալով շիտակ տուն կ'ուղղուին ուշ ատեն, երբ Սիմօն աղան եկած, հանուած անկիւնը նստած էր:

— Վա՛յ մարի՛կ... լմնցայ լմնցա՛յ... հոգիս մարմնէս քաղուեցաւ... Սիմօն աղա՛, կ'ըսէ Մարեէնէ գլխարկը մէկ կողմ նստելով:

— Կայնէ նայինք քէսէ՛ն ի՛նչ քաղուեցաւ, ան հասկնանք...

— Աման հայրիկս, տեսնաս ի՛նչ խըյախ խուճաշ մը առինք, եանի այեարը գեղին մէջը մէկուն կոնակը չպիտի տեսնաս...

— Չելլայ քալիքաթուռ բան մը ըլլայ աղջիկ, գէրէ հիմակուան խուճաշները խորեն խուրճս բաներ են, իմ գէնահաթս է չիյտե՛մ կոր...

— Քա ի՛նչ կըսես, հայրի՛կ, Օ Լիօն մըտանք, մեզ տեսնալուն կիպի, անանկ իրար անցան, անանկ իքում ըրի՛ն քի, վերտիվէնէն չի յոգնինք տէյի մաքինալը վախճով վեր հանեցին...

— Աղջիկս ելլալը կը հանեն ամա, ետքը փարաներնիդ սոթթեն նէ, մէյտան սիւքիւր-կէսիով դուրս կը նետեն մարդը...

— Անանկ ալ եղա՛ւ եա, վար իշնալիքէն թէքէս ի վար իշնալ մը կիյնաի կոր քի... պէրէքեթաթ ծունգուրներս խուճէթի են... կըսէ Տիկինը:

— Էյ բացէ՛ք նայինք տա խուճաշը, նաւը բան է...

Օր. Սրբուհի մասնները կտրտելէն բաքէթը կը բանայ...

— Քա՛... ծունը գլխուս...

— Քա վո՛ւյ... քէօռնամ... լըմընցանք...

— Ի՛նչ կըլլաք կոր, ի՛նչ եղաւ, օձ ելաւ մէջէն ի՛նչ եղաւ կըսէ Սիմօն աղա ոտքի ելլալով:

— Քա՛ տուտու բաքէթը նայէ...

— Կընի՛կ, աս շէյրան պեզին մութվախի աստա՞ն տէյի առիւր չէնէ տօմաթէսի սիւղ-կէն...

— Քա ա՛տ ինչ է, հիմա խելքիս կուգայ, քա խուճաշը, երկու աշուղնին քէօռնայ, աշըրմիշ են ըրէր... կըսէ Տիկին Մարեէնէ...

— Դուն չաշըրմիշ՝ անոնք աշըրմիշ են ըրէր կընիկ, խելքդ ո՛ւր էր... կըսէ Սիմօն աղա...

— Ճղակտոր ելլան, աս բիծերը ներսի մաղաղան գացին նէ բաքէթը քովս դրի, ի՛նչ են ըրեր նէ ատ քէթէին ըրեր են...

— Հիմա ի՛նչ պիտի հագնինք տուտու, ի՛նչ պատիժ բերի գլխուս ըսելով՝ օրիորդները կսկսին արտասուել:

— Հիմա եղածը եղած է, անողը ձենէ էվէլ պէտք ունի եղէր, ձեր ծուրի սիւսերուն համար խեղճ մարերնիդ պէքճի ըրիք նէ, Ձատիկն ալ դուք պէքճութիւն ըրէք քի երթաք տէ սովրիկ...

Արդ, վաղը երբ եկեղեցին ֆըշաֆըշ հագուստներով տիկիներն եւ օրիորդներ տեսնաք եւ զմայիք, յիշեցէք յօղուածս եւ ըսէք դուք ձեզի «չատ խըզ մըներ, քիմ պիլիր ի՛նչ սիրտ հատնումով հագեր ելեր եկեր ես... որի՛ համար է աճապա, որի՛...»:

ԼԻԼԱ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Պաշտօնակցի անկեղծ զգացմամբ՝ կուգանք աւետել Իզմիրի Օրաթերթին՝ Արեւոյտի վերաբացումը, որ ասկէ մէկ երկու շաբաթներ առաջ դադարման ենթարկուած էր:

Անսայթաք յարատեւութիւն կը մաղթենք իրեն:

ՄԱՐԿՏՈՒԿՆԵՐ

ՄՏՔԻՍ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՆ ՄԷԶ

ԹԵՂԻԿ ԵՒ ԼԻԼԱ

Թէոդիկ՝ նոր Հայնվարին վարպետներէն մէկը, որ մը Հանրագիտակի խմբագրատունը կը գտնուէր բացառիկ «Այգոմ»ին առիթով, ու իր մէկ յօդուածին փորձը սրբագրելու վրայ էր:

Յօդուածը ութը բունթօ գիրով չարուած ըլլալուն, Թէոդիկ՝ որպէսզի բան մը չը փախցնէ աչքերէն՝ մեծ խոշորացոյց մը բերած էր հետը:

Ու փորձին վրայ քիչ մը ծռած՝ խոշորացոյցը տողէ տող կը պատցնէր:

Աս բանը, մեր զաւեշտագիրը՝ Լիւան կը դիտէր և տեսէք ինչ կըսէ ափափոյ՝ Ամէնուն Տարեցոյցի Հեղինակին.

— Թէոդիկ, մահալլեպիի վրայ կրակ կը պատցնես կոր որ բեաի կապէ...:

ԲԻԷՐ ԼՈԹԻ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱ.

ՆՈՍԵԱՆ, ՈՒ ԱՅՎԱԶՂ

Առաւօտ մը, Աղեքսանդր ԼՖ. Փանոսեան՝ «Այգեկութեան» հեղինակը, կը նայի որ «Շողեր ու յօդեր»ուն պէս սպասուի է... Երկուսին թուղթը՝ ու չիտ ու չունչը այլազին ռենհակը կ'առնէ: Այլազը գնումնէ՛ր ընելու համար դուրս ելած ըլլալով, Փանոսեան սեղանի մը մօտ կ'երթայ ու դարակը կը բանայ: Հոն աչքերուն կը նշմարուի «ի մէջ ալլոց»... այցաքարտ մը. հետաքրքրուած կ'առնէ քարղը ու զարմանքով կը կարդայ:

ԲԻԷՐ ԼՈԹԻ

Յրանսական Սկադեմիաէն

Եւ Լօթիի ձեռագիրովն ալ՝ հետեւեալ իմ անկեղծ շնորհակալութիւններս

Իրար կ'անցնի Փանոսեան, ինչ գործ ունէր Ակադեմականին այս քարթը այլազի մը սենեակին սեղանին դարակին խորը, համմէ...

Կարելի էր որ ինք բան մը գրած ու ղըրկած ըլլար Լօթիին, ու ան ալ ղըրկած ըլլար շնորհակալութեան այս քարթը:

Ինք բան մը չէր ղըրկած: Բայց այլազին քով...:

Աւանդութիւնը կըսէ թէ... Փանոսեան բաւական տէրտ ըրած է՝ գիշեր ցորեկ ջանալով լուծել հանելուկը: Բայց կրցա՛ւ լուծել հանելուկը. եթէ անլուծելի մնացած է՝ նորէն իր թօհաֆութենէն բան մը չէ՛ կորսնցուցած խնդիրը:

ԶԵՌԻՔԸ ԶԵՆԵ ՄԻ... ԱԶԲԸ

Անգամ մը քահանայի մը ձեռնադրութեանը հանգէսին ներկայ կը գտնուէի: Ողջոյնի պահը եկած էր: Սարկաւազը երիտասարդ մըն էր, որ Հանդիսագիր Սրբազանին ձեռքը համբուրելէ ետքը երբ նորընծային կը մօտենայ անոր ալ ձեռքը համբուրելու համար՝ երբ Սրբազանը կը մոլտայ:

— Աջը համբուրէ աջը...:

Սարկաւազը, ասոր վրայ, ճիգեր կընէ նորընծային հասակն ի վեր բարձրանալով աչքը համբուրելու... Սրբազանը բարկացած կը գոռայ:

— Աչքը չէ՛ ծօ, ձե՛ռքը, ձեռքը...:

Բայց ամէն պարագային, աջը աչք հասկըցողը՝ ասկեց աւելի գլուխ-գործոց փայցօ մը չէ՛ր կրնար ընել:

«ԱՌԱՆՔ ՏՈՒԱՆՔ»... ԱՂԵՔԻ,
ՀԱՅԱ ՄՆԱՅԱԾԸ...

Անանկ կը պատահի որ, ծովեզերեայ թաղի մը թաղականները փոխուին ու ուրիշներ ընտրուին: Նոր թաղականները իրենց գլուխը ունենալով նորընտիր Ատենապետը, կ'երթան ինքնադարան՝ ուր բազմած էին հինները՝ հաշիւ տալու կազմ ու պատրաստ Ակընցի Ատենապետովն հանդերձ:

— Կը հաճի՞ք հաշիւները, տոմարները մեզի յանձնել, կըսէ նորը հին Ատենապետին:

— Հաշիւվն ու տոմարը ի՛նչ ջրլի էֆեմսիւմ, առանց ջրանց՝ մնացածն ալ մատափ առանց, կը պատասխանէ պաղարիւնութեամբ Ատենապետը, որ սուտ ալ գուրցած չէր թերեւս...:

Անմեղուկ՝ Վ. ԳՐԻԸՔՅԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽԱՍ-ԳԻՒՂ. — Տեղւոյս թաղ. Խորհ. Պատ. անդամները, նկատելով որ կարգ մը եկեղեցական և կրթական խնդիրները անլուծելի կը դառնան, որոշեցին յատուկ խորհրդական մը ընտրել բանիւրուն արհեստաւորներէն: (Այս լուրին տակ բան մը կայ, բայց ես չիկրցայ հասկնալ. Ծ. Լ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Լուսաւորեալի իրենկունը Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ մատմադրի մը անբիսբի գլխարկը կրակ առնելով թէեւ մեծ վտանգի մը սկիզբ տուաւ, բայց անմիջական օգնութեանց շնորհիւ կարելի եղաւ մարել: (Իսահակէթ եղաւ օրիորդ, արդեօք ձեր այդ original գլխարկը քանի քանի երկատարդներ պիտի այրէր ու մրկէր. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Սէլամիէի և Նոր-Թաղի բաժանեալ թաղեցիք բարի նախանձէ մղեալ ոգի ի բռն կաշխատին հասոյթի առաւելութիւն մը գոյացնել: Կրտսի թէ այս առթիւ կրնան ալ բէշերնին սոթթած մէջ են ինկեր: (Էճնաս մտաւ մի ... խերը տեսէք. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Չափի առթիւ ամբողջ Բերա հաւկիթ կտրած է, հաւկիթ՝ ցուցափեղկերու մէջ, հաւկիթ՝ փողոցները, հաւկիթ՝ եկեղեցիներու մէջ, հաւկիթ՝ հոս, հաւկիթ՝ հոն: (Ամա՛ն ... Սկիւտար մ'անցնիք, գտնուածները մարսելու ստամոքսներ կը պակսին արդէն. Ծ. Խ.):

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Տեղացի նորավիպագիր միւսիւն Չափին առանց նոր քօթիւմի չանցընելու համար Կարմիր Աքլորին դիմելով խնդրեւ է որպէս զի ոտանաւոր ռեկլամի մը փոխան հաճի հազուեցնել զինք: (Ուսերուդ քիչ մը բամպակ դնել տուր, որ պիտի երեւի հետ վեր կենայ. Ծ. Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Կիմանանք թէ այս տարի իբր նորոյթ, մէկ քանի տիկիներ յանձն առեր են պնակ չըջազայել խթման իրենկունը: (Առջեւէն մոմ բռնողը ո՛վ պիտի ըլլայ. That is the question. Ծ. Խ.):

ԱԼԷՄ-ՏԱՂԻ. — Չափական ծթած վիզիթներէն ազատելու մտօք հոս հասնողներու թիւը ըստ բաւականի չատցաւ, այս առթիւ աւելորդ չէ յիշել թէ՛ ծանօթ պանդոկապետ Յովակիմ աղա երէկուրէ սկսեալ իր աւանդական էկլսէ չաքմա ֆոաքը մէջտեղ հաներ է: (Տեսնուինք Յովակիմ աղա, կուգամ կոր. Ծ. Լ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Ո՛վ իմ սիրեցեալ և զիշերը չորս անգամ երազս խանգարող Պուռմանան, Հանգրազիսակի դրամները իւրացնելէդ վերջ՝ պիտի համարձակի՞ս արդեօք խոստովանիլ և հաղորդուիլ:

ՄՐԱՄԻՏ ԶԲՕՍԱՆՔ

ԼՈՒԾՈՒՄ

ԹԻԻ 4

Ք	ա	ն	ա	կ
Ա	մ	ո	ւ	ր
Ն	ո	ր	ե	կ
Ա	ւ	ե	լ	ի
Կ	ր	կ	ի	ն

Ճիշդ գտած են, թէեւ տարբեր ձևերու տակ, Օրիորդք Տիրուհի Ս. Մայխասեան և Նուարդ Պողոսեան (Լուս. վարժարանէն), Նուարդ Թէոնեան (Գատը-գիւղէն), Հռիփսիմէ Տէր-Պողոսեան, Թիւրանիկ Միքայէլեան, Վիքտոր Օ. Մըսրեան, և Տիարք Վահրամ Դերձակեան, Ոսկիւն Մ. Մարգարեան, Վաղարշ Կ. Թագւորեան (Սկիւտար Ներսէսեան վարժ.), Սեփոն Տաքէսեան, Միհրդատ Տօնիկեան, Լիւոն Սաքսեան, Պողոս Էրզրումլիեան, Արամ Տէր-Արսլանեան, Լիւոն Սարգիսեան, և Նիկոմիդիայէն Օ. Մ. Յ. Պ.:

Որոնցմէ՝ Օր. Թիւրանիկ Միքայէլեան վիճակաւ կը շահի խոստացուած բոսմէսին՝

187,670 թիւը:

ՀԱՄՈՎ ԶԵՐԵԿՆԵՐ

Վաղը ամէնքդ ալ պիտի վնտոէք Չափական չեօիեկը, բայց աղէկը, թարմը, համովը, հոտովը, աժանը, եփուը, իւղոտը, չաքարովը, սպունգի պէս, և վերջապէս պիտի փնտոէք և չպիտի դոնաք... մեղք...: Բայց երբ Բերա, Շիտակ ճամբան, համբաւաւոր ՀԱՃԻ ՍԱՐԻՄ ԵՒ ՈՐԴԻՔ չաքարաւաճառաւորն անգամ մը դիմէք՝ այն աստի միայն պիտի կրնաք ճաշակել, ճաշակի յարմար չէօրեկները յատկապէս պատրաստուած: Ուրիշէն մի գնէք, դրամուդ մեղք կընէք:

Արեօմաքս ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի Գաւսէի քիւ 52.

ՄԵԾ ԳԱՃԱԴԱՏՈՒՆ

ԼԱՆՑՅՈՐԶԵՆԻՍ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԼՏԻՆՍԿԻ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԼՅ

Գ. ԷՐՄԵՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համան, Թոփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանքաց
տոկոսներով եւ գիններու անմիջեւ
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց շիւք եւ դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին. 50-29



ԱՌԻԹԵՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԴՈՒԼԵԱՆԻ

[Ճեղք պէյ խանի
տակ]

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Ջինսասանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըը-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտոյն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱՄ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 դրշ.	Վեցամսեայ	25 դրշ.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասանան	»	»	6 ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՊԱՃԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասեքի Ասատուեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւորվը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ օսմ. Մանտաբորթով եւ կամ բոսթայի փոխով 20 հաւան
20 դրուշի հաշուով:

ԳԱՌՆԻԿ ՔԵՇԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանգ-Բուլօ խան իբւ 2

Նախ փորձառուները, յետոյ խաբ-
ուողները միայն գիտեն էթ ո'րչափ
զժուարէ, գտնել ու գնել ապրանք-
ներ՝ որոնք թէ տոկուն ըլլան, թէ ճա-
շակաւոր և թէ . . . աժան :

Գառնիկ Քէշիշեան վաճառատունըս
թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպա-
կան գործարաններէն բերել տուած է
տեսակ տեսակ կանանց և արանց յա-
տուկ Ֆանելաներ, գուլպաներ, բաշկինակ-
ներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ,
Ֆիլիփս և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկ-
ներ, գլխու շարքեր, քաւ ֆուսէներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձրարենք շնորհամ
մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ
անպատճառ դոհ մնացողներ միշտ հոն
գիմելով պիտի հաստատեն թէ՛ զինե-
րու աժանութեան, ճեսակի ազնուութեան և
ապրանագ տկունութեան երեք առաւել-
լութիւնները ուրիշ ո' և է տեղ կարելի
չէ գտնել :